Լեռ Կամսար

Փառապանծ Վրիպակներ

Համաշխարհային բժիշկը

Ահա ձեզի հիվանդանոց մը, որ կկոչվի Եվրոպա:

Քով-քովի անկարգ ձևերով գետնի վրա տարածված են պետությունները, ամենքն ալ փորացավե մը բռնած՝ կմռռան, կգալարվին: Այս բազկատարած գալարումներուն ատենն է, որ իրարու քիթը կարյունեն կամ մեկի աչքը կհանեն, և ասիկա դիվանագիտական բարբառով «կոնֆլիկտ» կկոչվի: Վա՜յ է, թե մեկը մեռնի այդ դժբախտ հիվանդներեն. իսկույն անոթի գայլերու նման վրա կհասնեն, ինչ ձեռքն իյնա՝ բերանը կխոթեն:

Այս հիվանդանոցի հսկող միակ սրտացավ բժիշկը Ամերիկան է, որուն տունը թեև շատ հեռու է, բայց Երևանի բժիշկներուն նման կառք չի պահանջեր քեզմե, ան իր նավը կհեծնի կուգա: Իբրև վիզիտի վարձ ոսկի կուզե, բայց ավելի շատ նավթ կառնե: Գրեթե նավթի ամանը միշտ ետուր կախած կպտտի. մեկին գործ մը տեսավ թե չէ՝ իսկույն «Խնդրեմ ամանս լեցուր» կըսե:

Հենց այս րոպեիս, որովհետև երկու նավ է դրկեր Բոսֆոր, խոշոր նավթի տակառ մը ունի տնկած Լոզանի կոնֆերանսին կիպ մեջտեղը սա վերտառությամբ, թե «Մոսուլի նավթը որուն իյնա, նա տակառը պիտի լեցնե»: Ու պետությունները շվարած մեկ հսկա տակառին կնային, մեկ Մոսուլի նավթին և ոչ մեկը սիրտ չի ըներ հանքերը վերցնել:

Աշխարհի բոլոր «կոնֆլիկտները» Ամերիկայի դեղահատովը կլուծվեն ու դեղահատը բաղկացած է 2 անգլիական կարծիքե, մեկ ու կես ֆրանսիական, մեկ իտալական՝ լուծված երեք բաժակ ամերիկյան կարծիքի մեջ:

Բայց Ամերիկան, սա համաշխարհային բժիշկն ալ զերծ չէ հիվանդութենե: Ուրույն հիվանդություն մը ունի, որ Մոնրոյի օրենք կըսվի ու հաճախ անկողինը կնետե զինքը: Այս հիվանդությունը, նկատված է, որ կբռնե Ամեիկային այն պահերուն, երբ աղքատ, նավթազուրկ հիվանդի մը վրա կկանչվի: Այսպես, երբ չորս տարի առաջ, կեսգիշերին հանկարծ Հայաստանին սանձին բռնեց և անկախություն կուզեր, 14 անգամ մարդ ղրկեց Ամերիկայի ետևեն՝ չեկավ, չեկավ առարկելով թե Մոնրոն պատվիրեր է տունեն դուրս չելնել: Իսկ այսօր, երբ Անգլիան կկանչի Մոսուլի նավթը կիսելու՝ քրտնաթաթախ, ոտաբոբիկ, փանթալոնին կոճակները վեր ձգելով կվազե, դեմն ելած Մոնրոյի օրենքը ոտով գետինը գլորելով…

1922

***

Ինչ ուզում եք ասեք, ես այն հաստատ համոզմանն եմ, որ Իսպանիան գաղտնի առևտրով է զբաղվում:

Եթե ոչ, այդ ինչպես է, որ փառավոր է ապրում:

Ասում եմ, էլի, կամ գաղտնի առևտուր է անում, կամ մարմնավաճառությամբ է ապրում:

Փորթուգալիան իր աչքով տեսել է, որ գիշերները ամերիկյան ու անգլիական նավեր են մոտենում Իսպանիայի ափերին: Ամերիկան հետը ռազմական դաշինք ունի, բայց չի հայտարարում: Եվ առհասարակ նրա հետ վերաբերվում է որպես ապօրինի կնոջ:

…Դժվար ժամանակներ ենք ապրում. այնքան, որ պետություններն էլ սկսել են անպարկեշտ կյանքով ապրել:

Յատուկ Պոէմ

***

Ամերիկան տենդագին ռազմական բազաներ է կառուցում օտարների հողում:

Այս եռանդով որ գնա, ոչ մի պետության այլևս արտաքնոցի տեղ չի թողնի և պետությունները ձեռքն իրենց խոնջանին՝ պիտի Ամերիկային դառնան և տեղ պահանջեն իրենց բնական կարիքները հոգալու համար:

Մի թերթի ասելով, Ամերիկան պատրաստվում է Սահարայում համաշխարհային արտաքնոց կառուցել:

Գեշ միտք չէ, իհարկե, բայց ես չեմ պատկերացնում, թե Նորվեգիան այդքան հեռավորությունից ինչպե՞ս պիտի օգտվի Ամերիկայի ստեղծած այդ բարիքներից: